

Այս տարի Հայաստանեայց Առաքելական եկեղեցին Յուլիս 25-ին կը տօնախմբէ Սբ.

Թաղէոս Առաքեալի եւ Սանդրուխտ կոյսի տօնը:

Գուստր Սանատրուկ թագաւորին, որ իր հօրմէ գաղտնի աշակերտած էր Թաղէոս առաքեալին, եւ ընդունած Քրիստոնէութիւն: Սանատրուկ, իմանալով այս մասին շատ զայրացած էր եւ հայրական ամէն ողորհիչ միջոցներ ի գուր գործադրելէ վերջ, անդրդուելի գտնելով իր աղջկան հաւատքը, հրամայեց անոր մահը:

Սբ. Թաղէոս թաղեց անոր մարմինը թաքուն տեղ մը, եւ քանի մը օր վերջ ինք եւս նահատակուեցաւ գլխատութեամբ՝ Սանատրուկ թագաւորի հրամանով: Շուրջ երեք դարեր անյայտ մնացին անոնց գերեզմանները, մինչեւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:

Ըստ Յայսմաւորքի Կիրակոս անուամբ միայնակեաց մը, որ կը բնակէր Թաղէոսի եւ Սանդրուկի նահատակութեան վայրին մօտակայքը Սանատրուկ կոչուած լեռան մօտ, Արտազ գաւառի Շաւարշան դաշտէն ոչ շատ հեռու: Տեսիլքի մը մէջ տեսաւ ուր առաքեալն ու կոյս մատնանիշ կ'ընէին իրենց գերեզմանները. փորուելով բացուեցան անոնք, ու գտնուեցան նշխարները: